



Ողջ աշխարհում կաշառատվությունը շարունակում է մնալ շատ տարածված, սակայն մարդիկ պատրաստ են դրա դեմ պայքարել

Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի աշխարհում ամենաձավալուն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին 12 ամիսների ընթացքում հարցվածներից յուրաքանչյուր չորրորդը կաշառք է տվել

Բեռլին, 9 հուլիսի, 2013 – Համաձայն Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի աշխարհում ամենաձավալուն ուսումնասիրության արդյունքների՝ հարցվածների ավելի քան կեսը գտնում է, որ վերջին երկու տարիներին կոռուպցիան իրենց երկրներում աճել է: Սակայն, միևնույն ժամանակ նրանք հաստատապես հավատում են, որ իրենցից ինչ-որ բան կախված է, և իրենք ունեն բավարար կամք՝ ձեռնարկելու քայլեր կաշառակերության դեմ:

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը 2013 (ԿՀԲ 2013) դա աշխարհի 107 երկրներում 114,000 մարդկանց շրջանում անցկացված հարցում է և այն ցույց է տալիս, որ կոռուպցիան շատ տարածված երևույթ է: Հարցվածների 27 տոկոսը նշել է, որ իրենք վերջին 12 ամիսների ընթացքում վճարել են կաշառք հանրային ծառայություններին և հաստատություններին, որը ցույց է տալիս, որ նախորդ հարցումների համեմատ որևէ բարելավում տեղի չի ունեցել:

Միևնույն ժամանակ, հարցվածների մոտավորապես 90 տոկոսը նշել է, որ իրենք կպայքարեն կոռուպցիայի դեմ: Իսկ այն հարցվածների երկու երրորդը, որոնց առաջարկել են կաշառք վճարել, մերժել են այդ պահանջը: Այս թվերը ցույց են տալիս, որ իշխանությունները, քաղաքացիական հասարակությունը և գործարար սեկտորը պետք է ավելի մեծ ջանքեր գործադրեն՝ ներգրավելու քաղաքացիներին կոռուպցիայի դեմ պայքարում:

“Կաշառակերության մակարդակը ողջ աշխարհում շարունակում է մնալ շատ բարձր, սակայն մարդիկ հավատում են, որ իրենք կարող են կանխել կոռուպցիան և զգալի թիվ են կազմում նրանք, ովքեր ցանկանում են պայքարել պաշտոնեական դիրքի չարաշահման, զաղտնի գործարքների և կաշառակերության դեմ:” – նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահ տիկին Հյուգետ Լաբելը:

ԿՀԲ 2013 վեր է հանել նաև այն իրողությունը, որ չափազանց մեծ թվով երկրներում բացակայում է վստահությունն այն հաստատությունների նկատմամբ, որոնք հենց կոչված են պայքարելու կոռուպցիայի և այլ հանցագործությունների դեմ: Հարցման մեջ ընդգրկված երկրներից 36-ում ոստիկանությունն ընկալվում է որպես ամենակոռումպացված հաստատությունը, և այդ երկրներում հարցվածների միջին հաշվով 53 տոկոսին առաջարկվել է կաշառք տալ ոստիկանությանը: Դատական համակարգը ընկալվում է որպես առավել կոռումպացված հաստատություն 20 երկրներում, և դրանցում դատական համակարգի հետ առնչություն ունեցած հարցվածների միջին հաշվով 30 տոկոսին առաջարկվել է կաշառք տալ:

“Իշխանությունները պետք է լուրջ վերաբերվեն իրենց քաղաքացիների կողմից կոռուպցիայի դեմ արտահայտած բողոքին և ձեռնարկեն կոնկրետ քայլեր թափանցիկության և հաշվետվողականության բարելավման ուղղությամբ:” – նշում է



տիկին Լաբելը և շարունակում - “Մասնավորապես ուժեղ առաջնորդություն է ակնկալվում G20 խմբի երկրների կողմից: Այդ խմբի երկրներից 17-ում, որոնցում այս հարցումն անցկացվել է, հարցվածների 59 տոկոսը գտնում է, որ իրենց իշխանությունները բավարար ջանքեր չեն ներդնում կոռուպցիայի դեմ պայքարում:”

Քաղաքական գործիչներն իրենք դեռ շատ բան ունեն անելու՝ շահելու համար իրենց նկատմամբ հանրության վստահությունը: ԿՀԲ 2013-ը վեր է հանում քաղաքականության նկատմամբ վստահության ճգնաժամը և իրական մտահոգությունն այն հաստատությունների նկատմամբ, որոնք կոչված են պատասխանատվության ենթարկելու հանցագործներին: Հարցման մեջ ընդգրկված երկրներից 51-ում կուսակցություններն ընկալվում են որպես առավել կոռումպացված հաստատություններ: Հարցվածների 55 տոկոսը գտնում է, որ իրենց երկրների կառավարությունները ղեկավարվում են իրենց մասնավոր շահերը հետապնդող խմբերի կողմից:

Քաղաքական գործիչները պետք է իրենք օրինակ ծառայեն՝ հրապարակելով իրենց և իրենց ընտանիքների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերը: Կուսակցությունները և անհատ քաղաքական գործիչները պետք է բացահայտեն իրենց եկամուտների աղբյուրները՝ ցույց տալու, թե ով է իրենց ֆինանսավորում և դրանով իսկ վեր հանելու շահերի հնարավոր բախման իրավիճակները:

Այսօր, համեմատած 2008 թ.-ի հետ, երբ սկսվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, ողջ աշխարհում մարդիկ էլ ավելի ցածր են գնահատում իրենց առաջնորդների ջանքերը կոռուպցիայի դեմ պայքարում: Եթե այն ժամանակ հարցվածների 31 տոկոսն էր գտնում, որ իրենց իշխանությունների ջանքերը կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ էին, ապա այս տարի այդպես է կարծում հարցվածների միայն 22 տոկոսը:

“Իշխանությունները պետք է ապահովեն իրենց երկրներում կոռուպցիան կանխարգելող և նրա հետևանքները չեզոքացնող ուժեղ, անկախ և կարող մարմիններ: Չափազանց մեծ թվով մարդիկ են տուժում, երբ կոռուպցիայի աղետը խարխլում է պետության առանցքային հաստատությունները և խաթարում նրանց կողմից մատուցվող կենսական անհրաժեշտության ծառայությունները:” – եզրափակում է տիկին Լաբելը: